ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2012թ. փետրվարի 13 թիվ 17 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 198-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի <<2011 թվականին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում պետական բյուջեի միջոցներով հիմնանորոգվող դպրոցների, մշակույթի տների, բազմաբնակարան շենքերի և կառուցվող օրվա կարգավորիչ ջրամբարների ավարտված շինարարական աշխատանքներն ընդունող հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 198-Ա կարգադրության հավելվածի մեջ կատարել հետևյալ լրացումն ու փոփոխությունը՝

1) հավելվածը լրացնել նոր տողով. <<Ա.Դավայան- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/>>,

2) հավելվածի <<Ս. Պետրոսյան- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ /հանձնաժողովի նախագահ/>> տողի <<հանձնաժողովի նախագահ>> բառերը հանել:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ